Եթէ գուցէ ընթերցօղ սմայ ով ոք ոմն որ իցէ որ ոչ կամի որոնել ՚ի միտս իւր լաւն և վատն, բարին և չարն, և ՚ի միտս իւր առնէ թէ այսքան բարութիւն Օրինաց զի արդ ՚ի միտս ոչ առին յամայն իշխանք եւրօպու և կամ այլ ոք ինքնակալ թագաւորութեամբ յիշխողք ՚ի վերայ ազգաց, վասն բանիւտ այդորիկ ասեմ որ նոքայ ունին ՚ի միտս և ամենևքեան յարաժամ գովաբանեն յօրէնս հռօմայեցւոց, և պատմութիւն աշխարհագրաց նոցայ ցուցանեն երջանկութիւնն ժամանակին նոցայ մինչ վարէին իշխանութիւնս իւրեանց ըստ Օրինօք անխախտելեօք յաւելի քան թէ վեց հարիւր ամս, և նովաւ պատմեն նախագուշակքն ազգին նոցայ այսինքն, Հռօմուլուս և Ռէմուս երկուս եղբայրս որում քառասուն հաւատարիմ բարեկամօք ելին ՚ի գործ քաջութեան ըստ Օրինօք և այնքան երջանկացան մինչև գտան Օրէնս իւրեանց տէր և թագաւոր ՚ի վերայ երիս բաժին ՚ի չորս բաժնաց աշխարհիս, այլ յետ այնորիկ եմուտ ՚ի մէջ նոցայ ժառանգաւոր կայսերութիւն որում առաջնում Օրէնս նոցայ ոչ խոստանայր տալ իշխանութիւն ժառանգաւոր ումեք, բայց նորայ որում ընտրողութեամբ արժանի գտանիցիւր, և յանել պիշխանութիւն ՚ի նմանէ ՚ի պատճառէ գործոց ձեռաց անօրէնութեան նորայ, և յետ մտանելոյ մէջ նոցայ սովորութիւն ժառանգաւոր իշխանութեան Օր աւուր թուլա-